

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

## ԱՐԱՐԱՏ ԱՄՍԱԳԻՐ

Արձական, պատմական, բանասիրական և բարձրական, աշխատասիրութեամբ մտաբանից սուրբ էջմիածնի :

Արձականին մէջ կը գրուին մեր եկեղեցական կարգաց և արարողութեանց վրայ տեղեկութիւններ . կաթողիկոսաց գործեր . սուրբ Հարց գրուածներ, ազգային մատենագրաց կենսագրութիւններ, և ձեռագիր մատենից ծանօթութիւններ :

Պատմականին մէջ Հայաստանի նահանգաց, դաւառաց և քաղաքաց աշխարհագրական դիտելիք . վանորէից և մենաստանաց ստորագրութիւններ . արձանագրութիւններ, որոց նշխարքներն են որ թերութեամբ ժամանակ ժամանակ հրատարակուած են օրագրաց և ամսաթերթից մէջ :

Բանասիրականը պիտի լինի Ազգիս վիճակին վրայ տեղեկութիւններ, ազգային դատասիրական լեզուներ, յօդուածներ, նամականիք, նախնեաց ձառեր, ճ նապարհորդութիւններ, ոտանաւորներ, թարգմանութիւններ և այլն, իսկ :

Բարոյականը՝ Սուրբ Գրոց վճռական առանձնեքու ընդլայնումներ, ազգային յիշատակարանք, առակք, հանելուկք, ընդ որս և օրագրալուրք և այլ պայպիսք :

Բարատը տպագրուելու է ի սր պարանի (Վճռոյս սուրբ) էջմիածնի նախնոյ և ընտիր տառերով և գեղեցիկ թղթով, առ այժմ ամոց յամիսութեանց թերթով յայտարարութեան հրատարակուելէն երկու և միս կտրը :

Բարատը գրուելու է պարզ աշխարհաբար Հայաստանի Արեւանայ գաւառական լեզուով : Ազգիս եկե-

ղեցական կղերը առհասարակ ի հարկէ Վնասգրիս բաժանորդագրելու գըրութէ կիտպին նշանակուած է նորագինը երեք մանէթ, որք միայն տպագրութեան ծախքը հանելու համար որոշուած են և ոչ վաստակի ակնկալութեամբ :

Բաժանորդ գրուելու ցանկացող Ազգայինը կը հրատարակուին իրենց բատորագրութիւնը յանձնել վիճակաւոր Գեր . Առաջնորդաց և նոցա փոխաւորդացը, կանխիկ վճարելով Արատայ տարեկան արժէքը, որք անգամք են միանգամայն և գործակալք Վնասգրիս :

Ս . Էջմիածին . 1868 . Սարգ :

### Ո Ւ Խ Տ

#### Հ Ա Յ Ր Ե Ն Ա Ս Ի Ր Ի

Ուտարեք ինչորեք ևս իւր ինչնին նով լինել է գրիտառե վան եղբայր ինց և ազգականաց բոս մարմնց : Գող . հուով . թ . 3 :

Հայրենիք և հայրենասիրութիւն, Ազգ և ազգասիրութիւն շատ սովորական բառեր դարձած են մեր խորհրդածութեանց, խօսակցութեանց և գրուածոց մէջ : Եթէ բանաս այս վերջին քանի մի տարուան ազգային յիշատակարանները, ձառագրութիւնները, գրութեանները, թատերական հատուածները, նամականին և մինչեւ անգամ աշակերտաց գլորոցական շարագրածները, ամեն տեղ հայրենասիրութիւն կը կարգաս, ամենու մէջ ազգասիրութիւն կը լրենս (1) : Այ մի դար

(1) Թեպէս Հայրենասիրութեան և Ազգասիրութեան բառերու կարմու թեանը նայելով մեկը կը նշանակե սեր առ հայրենի երկիրն և միւսն սեր առ Ազգը : Բայց որովհետեւ երկուսն ևս անխառնաբար իրարու տեղ

և ոչ մի ժամանակ այնչափ չեն կրկնը  
ուեր հայրենասիրութիւն և ազգա-  
սիրութիւն բառերը, ինչպես ներ-  
կայ գարուս մէջ, և ոչ մի դար այն-  
պէս ցուակցութեան և սիրոյ կա-  
րօս չէ եղած մեր Ազգը, ինչպէս ներ-  
կայիս մէջ, խօսքը իրականութեան  
տեղ է բռներ, և ազգասիրութեան վե-  
րայ խօսիլը՝ բուն ազգասիրութեան  
տեղ: Իայց՝ ազգասիրութիւնը իւր  
առանձին գծագիրն ունի և յատկա-  
նիք, իւր առանձին լեզուն և յա-  
տուէկ նշանաբանը, իւր կատարումն և  
իւր արդիւնքը: Հազարաւոր արարակ-  
ներու մէջ հայրենասիրութեան բարբառն  
յայտնի է, և բխրաւոր գործներու մէջ  
նորա խորհրդանշանը ակնկերու: նորա  
լեզուն՝ Արքատուն է: և նորա պատկը՝  
Նշույք, արտաքուք ազգակցոց համար  
նշույք եղարար համար: Այս լեզունով  
խօսեր են բոլոր հայրենասէրները, այս  
պրակով պատկուեր են ամեն ճշմարիտ  
ազգասէրները: Այս է նոցա ուխտը.  
« Բախտիք ինդրէի նշով լինել ի  
Վրիստոսէ վասն եղարար իմաց և ազ-  
գականաց ըստ մարմնոց: Այս թող լի-  
նի և մեր համար ուխտ և նշանաբան: »

Հայրենասիրութեան զգացմունքը  
ամեն տեղ և ամեն ժամանակ բնական  
և նուիրական զգացմունք է քարոզ-  
ուած. և նորա զոհը՝ Կոտորածը և մարդ-  
կան հաճելի զոհ: Հատ մարդիկ  
այս սիրով վառուած՝ իրենց սնծը զո-  
հած են, և դարերը վկայած են որ  
հայրենասիրութիւնը ցնորք չէ և ոչ

գործ գրուած են և շատ անբաժնի միայն ետքնասի-  
րութիւն բառով հակացուած է և ազգասիրութեան բառ-  
ով իմաստը, ուստի մերք ևս մեր գրութեան մէջ էր,  
բարձե քն զատեցնիք, այլ շատ տեղ երկուսն ևս հա-  
մանան իմաստով գործ գրիք: Մեր ազգային ա-  
կիզմնիկ գրիչներն մեկը — Եղիշէ վարդապետը  
— հայրենասիրութիւն և ազգասիրութիւն բառե-  
րու տեղ գործ գրած ունի — Սուրբ Նովոմի: ըստ ու-  
րու ազգ և հայրենիք սուրբ են հայրենասիր գրախ-  
հածքը:

երեւակայութեան ճնունդ: այլ ցոյ-  
մունք և ճառագայթ է այն նուիրական  
վառարանին, ուր՝ Վոխախնամութիւնը  
ամիտիած է մարդկային բոլոր բարի  
զգացմունքները: Այն տեղ, ուր է սէր  
գերդաստանի և սէր մարդկութեան,  
այն տեղ է նոյնպէս և սէր Ազգի: Ազգա-  
սիրութիւնը զի դմունք է ընտանեկան  
սիրոյն և մարդասիրութիւնն՝ զեղմունք  
ազգասիրութեան: Այս երեքն եւս ի-  
րարմէ աղբերացած են և իրարու վե-  
րայ ամրացած: Այն կանոնաւոր եւ-  
զգայուն սրտերու մէջ սիրոյ ճառա-  
գայթները կանոնաւոր կերպով ցոյ-  
ցած են թէ՛ Վերդաստանի, թէ՛ Ազգի  
և թէ՛ Վարդկութեան վրայ: Իայց՝  
Կոտորած, որ մեր սիրտը և կարողու-  
թիւնը գիտէ, այնպէս ստեղծած է  
զմեղ, որ ամեն բանի մէջ փորքէն դէպ-  
ի մեծը գիտնիք, մեր որդիքը սիրելով ու-  
տանիք սիրել մեր ազգակիցները, և ազ-  
գակիցները սիրելով՝ սիրենք զմարդիկ:  
Մեր ընտանիքը գարգայններ մեր հայ-  
րենեաց համար և մեր հայրենիքը հա-  
նուր մարդկուն համար: յիք կը փափա-  
քիք բարիք տննել մարդկուն և մեր տա-  
ղանդով, հանձարով և ստացուածքով  
մատակարարութիւնը մեր հայրենիքէն  
եւ ազգէն սկսիք: վասն զի առանց  
ընտանեկան սիրոյ՝ հայրենասիրութիւն  
չիկայ, եւ ոչ առանց հայրենասիրու-  
թեան՝ մարդասիրութիւն, վասն զի  
ճշմարիտ դպրոց մարդասիրութեան՝  
հայրենասիրութիւնն է, և դպրոց հայ-  
րենասիրութեան՝ ոգին ընտանեաց:  
Բերնն, ընտանեկան երջանկութեան  
համար ազգ կործանել, և կամ ազգա-  
յին երջանկութեան համար՝ օտար  
ազգեր ոտնակոխ առնել, հրեշտկան  
սկզբունք է այս, արտաքոյ բնական և  
աստուածային օրինայ: Վրոյնպէս ևս մար-  
դասէր ձեւանալով՝ ազգութիւն ար-  
համարհել, և ազգասիրութեան էութ-

Թիւնն ուրանալ կընշանակէ ընտանիքը ջնջել, որ մեր որորանն ու գերեզմանն է եւ միանգամայն հայրենատիրութեան խանձարուրը :

Այսպէս ահա, հայրենատիրութիւն, որ ծնունդ է ընտանեկան սիրոյն եւ ճնող հանուր մարգաստիրութեան, շարժառիթն է և մեր սրտի խորոց յազման և առարկաց ներկայ գրութեան : Բայց յառաջ քան բացատրելն թէ քիչ է հայրենատիրութիւն և ուխտ հայրենատիրին, տեսնենք ամենէն առաջ թէ քիչ է Հայրենիք և քիչ է Ազգ :

Հայրենիքն է մեր որորանը և գերեզմանը, հայրենակիցներն են մեր մարմինը եւ արիւնը : Հայրենիքն է այն հասարակաց մայրը, որոյ ծոյցն մէջ աւանդները կը ծնանին եւ կը զարգանան : Իսկ Ազգն է այն հասարակաց միութիւնը, ուր իրարու հետ կը միանան անհատները, օգուտները և շահերը, և ուսն կեանքերէ կը կազմուի ընդհանուր կեանք, որ չընձուանիր անհատներու հետ, այլ կը յարատեւէ անընդհատ : Այս ընդհանուր և յարատեւ կեանքն է միայն, որ կարող է անսպառելի բարութեանց աղբիւր լինել, յառաջող իմութեան սկզբունք, զարգացման ոյժ ու պահպանութիւն և ազգային մարմնոց ապահովութիւնն ու երջանկութիւնն :

Այն է հայրենեաց և ազգի համառօտ գծապիւրը, մտքի սոււած բացատրութեանը նայելով : Բայց միթէ հայրենատէր սրտի համար ազգ և հայրենիք մեկնութիւն ունին և ռահման. ոչ բնաւ : Անիք գիտենք որ հայրենիքէն ընդարձակ ծովերով և ջամաքով բաժանուած հայրենատիրի համար, կարծես թէ, կենդանութեան կազդուրիչ տարերքը փոփոխուած են, ոչ նորա լեզուն նոյն լեզուն է, ոչ միտքը նոյն միտքը, և ոչ սիրտը նոյն

սիրտը : Անիք գիտենք որ մենք կրտրենք հայրենիքը, ինչպէս մեր կեանքը, և կրտրենք շատ բնականորէն, ինչպէս կը շնչենք օդը : Անիք գիտենք որ ազգի վիշտը մեզ կը վշտացնէ և բարեբաւտութիւնը մեզ կ'ուրախացնէ : Անիք գիտենք որ հայրենատէրները ուրախութեամբ կը մեռանին Հայրենեաց և Ազգի համար : Բայց հայրենեաց գեղեցկութիւնն է արդեօք և ազգի երջանկութիւնը, որ մենք կը սիրենք. ոչ ամենեւին : Այսն զի որքան ամառնի է հայրենիքը և հայրենակցաց վիճակը թշուառ, այնքան աւելի զգալի են հայրենատէր սրտին և այնքան աւելի սիրելի : Արեւմտ բուն իսկ հայրենիքն ու ազգն են, որ կը գրաւեն մեր սիրտը, և ոչ թէ նոցա շքեղութիւնը և վայելչութիւնը : Բայց թէ ինչու կրտրենք հայրենիքը, և ինչու սիրով կը մեռանիմք ազգի համար : — Հայրենատէր օրտերու մէջ պէտք է որոնել այս հարցման պատասխանը, վասն զի միտքը տրատասան չունի այս մասին : Ինչու Յակոբ և Յովսէփ նահապետները մահուան ժամանակ կ'երգուեցնեն իրենց որդիքը՝ օտար հողէ հանել իրենց սոկերքը և ամեն թաղել հայրենեաց մէջ, իրենց հարց հետ : Ինչու ասու ուսմաստուն Սովետս կենաց դպրութեանն ջնջուիլ կը խնդրէ իր ազգի համար, և ինչու Պօղոտ կը փափաքի և կ'ուխտէ նզով լինիլ ի Բրիտանոս վաստն եղբարց և ազգականոց : Ինչ միտք և քիչ հանձար կայող է մեկնել և համոզել մեզ. բայց հայրենատէր սիրտը կը խանդաղատի և կը զգայ, որ արդարեւ հայրենիքը քուցըր է նաեւ ոսկերաց համար և այնչափ մեծ է ազգն, որ մարդ ուրախութեամբ կը փափաքի նզով լինիլ նորա վառաց, բարորութեան և կատարելութեան համար, Արեւմտ, այն սերը, որ կը վառի մարդ

դու՛ն արտի մէջ իւր հայրենեաց և առ  
 գի համար , այն սէրը բնական սէր է .  
 բայց ի հարկէ դատարարակութիւնը և  
 կրթութիւնը մեծ ազդեցութիւն ու-  
 նին նոյն սիրոյ զարգացման և աճեցու-  
 թեան համար : Այճէ մարդու սրտի  
 մէջ բնականօրէն մի ձգտումն կայ իւր  
 հայրենական և ծննդական երկրի հա-  
 մար , և սի համակրութիւն իւր աղ-  
 քակցաց և հայրենակցաց համար : Բայց  
 զգայուն և կիրթ սրտերու մէջ այս  
 ձգտումն ու համակրութիւնը սրբ-  
 բուած զտուած են և նուիրականութե՛  
 հասած : Հայրենասիրութեան հուրը  
 մարտը հոգիներու մէջ սրբազան հուր  
 է և ազնիւ հուր , որոյ արտաքին երե-  
 ւոյթները մեզ յայտնի են , բայց ներ-  
 քին ջերմութիւնը , այն սքանչելի ե-  
 լիքարականութիւնը , որոյ հազորդակ-  
 ցութիւնը սրտի և արեան մէջ է ,  
 մեզ համար անմեկնելի է : Օտրդա-  
 ցիբ օտարութեան մէջ , մեծացիր փար-  
 թամութեան մէջ , հեռի հայրենիքէ ,  
 հեռի հայրենակիցներէ , բայց ունեցիր  
 սիրտ , ունեցիր կրթութիւն , և մի օր  
 անշուշտ սիրադ պիտի թռթռայ , աչ-  
 քերդ պիտի սլալտորին արտասուներով ,  
 և հոգիդ պիտի մղէ զքեզ հայրենիք  
 որսնել , ազգակիցներ ինդրել , ձոխ  
 ապարանքներէ խուսափել և զեղբարքք  
 շրջիլ : « Անկաւ ի սիրտ նորա , կ'ասէ  
 Ս . Գրքը . Սովխիսի համար , շրջիլ զեղ-  
 բարքք զորդուովքն իւրայելիդ : Թողաւ  
 Սովխէս Փարաւոնի արքայական պա-  
 լատը , թագաւորական գերդատանի  
 որդեգրութիւնը և ցանկացաւ իւր  
 բեռնակիր եղբարց հիւզերուն այցե-  
 լութիւն առնել , նոցա մէջ շրջիլ , նու-  
 ցա հետ ապրիլ և նոցա հետ մեռնիլ .  
 կամիք ասել , ջերմ սիրով սկսաւ սիրել  
 իւր արենակիցները : Ասան զի , սիրել  
 կը նշանակէ ազրիլ , միայն անձը սիրել  
 կը նշանակէ անձի համար ապրիլ . մի-

այն ընտանիք սիրել կը նշանակէ ըն-  
 տանեաց համար ապրիլ , և ազգ սիրել  
 կը նշանակէ ազգի համար ապրիլ : Առ-  
 գի սիրտը կը բաբախի ազգասիրի սրտի  
 վրայ , և իւր սիրտը ազգի սրտի վրայ :  
 Ազգասէրը կը շնէ այն շունչը , ինչ  
 որ կը շնչեն հայրենակիցքը . վստն զի  
 մի աներեւոյթ շունչ կայ , որ մէկէն  
 կ'անցնի միւսին : Այս սիրային աուրեւ-  
 առութեան մէջ , այս համակեցու-  
 թեան մէջ հայրենասէրը անձնաւա-  
 բութիւն չունի , նորա ցաւը և միւր  
 թարութիւնը ազգի մէջ է : Այս աղ-  
 քի հետ կը հիւանդանայ , ազգի հետ  
 կը տառապի , և ազգի հետ կը մխիթաւ-  
 բի : Արտա սրտի խորոց մէջ ձայն մի  
 կայ , որ միշտ կ'աղաղակէ . « Մ'ոք ,  
 ձէնը հիւանդանայ և ես ոչ հիւանդա-  
 նամդ » : Այս սեպհականութիւն չունի ,  
 վստն զի նորա սիրտը , բազուկները ,  
 սքնութիւնը , վստասկը , հարստու-  
 թիւնը , կեանքը և աղօթքը , բոլորը ազ-  
 գի համար են : Այս միթէ այս միայն :  
 Այ , ոչ , ազգի ցաւն զգալ , ազգի հետ  
 վշտանալ և ազգի հետ ուրախանալ ,  
 այս հայրենասիրութեան զիւրին աս-  
 պարէզն է : Այս աւելի գերազայնը ,  
 սուելի սքանչելին , աւելի ծանրն և փա-  
 վաքելին , այսինքն ազգի դառնու-  
 թեան բաժակը խմել , որ ազգի քիմ-  
 քը քաղցրանայ . ազգի յանցանքը ու  
 պաշտարել և նորա մեղաց համար մեռ-  
 նիլ , որ ազգը ներողութեան արժա-  
 նանայ , ազգի համար ջնջուիլ յերկրէ  
 և երկնքէ , որ ազգը երկիր և երկնք  
 ունենայ . ազգի համար նոյով լինիլ ,  
 որ ազգը օրհնութեան արժանանայ :  
 Այս սեղ է անհայրենասիրութեան  
 նուիրական կատարը , այս սեղ է հայ-  
 րենասիրի ուխտը , և այս էք օր պայ-  
 ման կը դնէք Սովխէս և կը պաղատէք  
 « Ալալեմ գրեզ , Տէր , եթէ թողու-  
 զվեդս ժողովդեան , թող , ապա թէ

ոչ Չնկեա վիս ի գարնութենէ քուսմէ,  
 յոր գրեցեր ո՛ր (Եւ. ԼԲ. 22.) Լ՛յս  
 ցաւով և հեծութեամբ կ'ախաբեր Պա  
 զոս : « Ախաբիք խնդրէի նշով լինիլ  
 ի Վրիստոսէ վասն ազգականաց իմաց և  
 եղբարցոյն Լ՛յսպէս կը փափաքէր և Նրե  
 միաս, որ իւր գլուխը ծով գառնայ և  
 այքերը արտասոււաց աղբիւր՝ իւր ազ  
 ցի փոխարէն ըլլու : « Ս' ասոր գգը  
 ըւխ իմ ի Նուր, և զաչս իմ յաղբիւրս  
 արտասոււաց, զի նսակի և ըյի զվեզս  
 ժողովրդեան իմոյ ո՛ր Լ՛յս է հայրենա  
 սէրներու ուխտը, այսպէս ուխտած  
 են հին և նոր Ախտի աննման պատ  
 գաճախօսները : Լ՛յս լեզուով խօսած  
 են մարդկային ազգի պատմագրու  
 թեան մէջ եղած բոլոր ճշմարիտ ժո  
 ղովորատիները, աղգասէրները և  
 մարգասէրները : Չափազանց սիրող  
 ները չափազանց վետեր կրած են, ու  
 մանք նշովուած ու մասնուած են, ու  
 մանք տանջուած և չարչարուած են, և  
 շատերը իրենց կեանքը ուրիշներու  
 կենաց համար զոհած են : Սէրը անխ  
 ճից և նախատանայ խաչի վրայ բարձ  
 րացուց այն երկնային Սարգասէրը,  
 որոյ սիրտը բոլոր մարգկութեան սրտ  
 տի վրայ էր, և բովանդակ մարդկու  
 թեան սիրտը՝ իւր սրտին վրայ, այն  
 սրտին վրայ, որով հիւանդ ապեիրը  
 կ'ողեւորին և կը կենդանանան և ճշն  
 շեալ ժողովուրդները կ'ազատին և կը  
 զօրանան : Նրանի ժողովրդին, որ չը  
 հեռանար այս փրկարար սրտէն : Լ՛յս  
 անբուժելի թշուառութիւն չունե  
 նար երբէք, և ոչ մշանջենաւոր գե  
 րութիւն : Սէրը գառապարտեց ան  
 նման հայրենասէր Սովէսը չքմանել  
 Լ՛յետեաց երկիրը : « Հայնդիման տես  
 ցես զերկիրն, և անդր մի մտանխիցես ո՛ր  
 Սէրը գառապարտեց Պոլոսը իր հայ  
 րենի յուսոյ համար ծանր շղթաներ  
 կրել : « Ս' ասն յուսոյն խորայելի կամ

ի շղթայս ո՛ր ( Գործ : ԻԸ. 20 ) : Սիրով  
 նախորհիկն և սուրբն Գրիգոր խոր  
 խորասն իջաւ, և Տրդատ ու Ներսէս  
 գառնութեան թիւնայլց բաժակը  
 քամեցին, իսկ սուրբ Սարգանաք և  
 Վեռնդեանք իրենց անձը զոհե  
 ցին : վասն զի ճշմարիտ սէրը առանց  
 զոհի չէ : Լ՛րդարեւ՝ հայրենասիրու  
 թիւնը այնչափ բնական է, որ մենք  
 հեթանոսական գարուց օրինակներ  
 եւս կարող ենք յանաջ բերել, ինչ  
 պէս են Կողորս Ա. Վեցիու. Ա) ուս Գ)  
 և այլք, բայց ըզձայն է մեզ մանա  
 ւանդ այն հայրենասիրութիւնը, որոյ  
 երկրաւոր մասունքները զտուած են  
 երկնային սիրով, որոյ առարկան է  
 մանաւանդ ազգի բարոյական կենդա  
 նութիւնը, կատարելութիւնը և ըւ  
 սաւորութիւնը, և որոյ հիմնաքարն է  
 Վրիստոնէութեան ազատարար եւ  
 անյաղթ ոգին : Լ՛յս տեսակ հայրե  
 նասիրութիւնն է որ կը խորտակէ ժո  
 ղովորեան շղթաները և հայրենիքը  
 կաղատէ ապականութենէ : Թո՛ղ հա  
 մախմբին ընտանիքներ, թո՛ղ գուճա  
 րին ժողովուրդներ, և թո՛ղ շինուին  
 քաղաքներ, այս ամենը մեղուի և մըր  
 ըունի աշխատանք է : Լ՛այց թո՛ղ իրա

(1) Աբրահմ վերին թագաւոր Աթենացոց : Ստ  
 թագաւորելով 1100—1132 թուականին նախ քան  
 շրիստոս, երբ Աթենացիք և Դորիսացիք կտրու  
 գե՛մ կը պատերազմէին, պատճառմաստեն լսեց որ  
 այն կողմը յաղթող պիտի գտնուի, որոյ թագաւորը  
 զոհուի : Ազատութեանը զոհեց սա իւր անձը իւր  
 ազգի համար և Աթենացի յաղթող հանգիստցան  
 Աթշտի տպաւորութիւն ազդեց այս անձնագրու  
 թիւնը, որ Աթենացիք արժան չը համարեցին ուրիշ  
 մէկ նորո տեղ թագաւոր գծել, և այսպէս վերջ  
 ցուցին իրենց թագաւորութիւնը :

(2) Վեճառ—Մոս եր հիւպատոս Հռովմայեցոց  
 315 տարի Բրիտանոն առաջ՝ որ ազատեց կու  
 նելիս Ասոր Վանիսացոց պատերազմին մէջ, իսկ  
 երկու տարիէն յետոյ Լատինացոց գե՛մ ունեցած  
 պատերազմին մէջ իւր անձը զոհեց որ յաղթութիւն  
 պարգևէ Հռովմայեցոց : Անվհե՛ր վաղեջ գեղի  
 թշնամեաց բանակը և սպանուեցաւ, որով և Հե  
 ռովմայեցիք յաղթող գտան :

ուսնըը հաստատուելի, արդարութիւնը  
 թագաւորէ, լուսաւորութիւնը ծա-  
 ւալի. — ահա մարդու աշխատանք, ա-  
 հա ճշմարիտ հայրենասիրի բաղձանք :  
 Վասնզե, այս վեճմանկան դաշտախարը կը  
 ծնանի մարդկութեան համար՝ Պղաւ-  
 անն, Սկրաս, Վալիլէ և Վեժանն,  
 իսկ վայրենութիւնը և արտապետու-  
 թեանն ահաւելի կիրքը կը ծնանի Չին-  
 գիսիաններ և Վենիթեմուրներ : Վա-  
 ւրն զի, ինչպէս կատարեալ մարդը՝ նոյն-  
 պէս և կատարեալ հայրենասէրը լու-  
 սաւորութեան փառաթիւն պէտք է որ  
 երեւին :

Ղշմարիտ հայրենասէրները և ժողո-  
 վորդասէրները իրենց ազատութիւնը  
 մատնած են և կեանքը զոհած, որ-  
 պէս զի ազգը և ժողովուրդը կեանք և  
 սնունդ ունենայ արգարութեամբ և  
 ազատութեամբ, վասն զի, արգարու-  
 թիւնը ժողովրդի հունձն է և հայր-  
 իսկ ազատութիւնը՝ նորա հարստու-  
 թիւնը, հանդատութիւնը և փառքը :  
 Վասն զի, կեանքն ուտել խմելը չէ, այլ  
 բանական կատարելութիւնը, առանց  
 որոյ չկայ մարդկութիւն, չըկայ և ազ-  
 րութիւն : Վեճ կեանքը զոհելը դիւ-  
 րին է ազգասիրի համար, կարծիք չը-  
 կայ որ իւր գոյքը զոհելը ազգի օգտի  
 համար՝ եւս ուտաւել դիւրին է :

Հայրենասէրները շատ անգամ ա-  
 պերախտութեան հանդիպած են իրենց  
 սիրած ազգի կողմէն և կը հանդիպին.  
 բայց ոչ ապերախտութեան վրէժխն-  
 դիր են ; ոչ արտունջներէ կը փշտանան  
 և ոչ բանաէ և կախադանէ կը զորհու-  
 րին : Սովսէս կենաց գարութեանէն  
 կը խնդրէ ընթուիլ այն ժողովրդի հա-  
 մար, որ անթիւ ապերախտութիւն-  
 ներ և թշնամանքներ յարոյցն րա գէմ-  
 նախատեց, յանդիմանեց և դաւնաւ  
 ցոյց : Պօղոս կը խնդրէ նորով լինիլ  
 այն ազգի որդւոյ համար, « Որք նը

զովութիւնը նզովեցին զանձինս, ոչ ուտել  
 և ոչ բնուել, մինչև սպանցեն զՊօղոս »  
 (Գործ. ԻԳ. 14) : Շատ հայրենասէր-  
 ներ գերեզման անգամ չունին այն  
 հայրենեաց մէջ, զոր կը սիրեն և որոյ  
 համար իրենց անձը կը զոհեն. « Վա-  
 ոչ որ գիտաց զգերեզման նորա (Սով-  
 սիսի) մինչեւ ցայսօր » (Օրբն. ԼԴ) :  
 Շատերու անունն անգամ բերել ջա-  
 նացած են այն ազգի մէջէն, որոյ սե-  
 րոյ համար խնդրած են նզով լինիլ.  
 « Վարձ ՚ի մէնջ, բարձ ՚ի մէնջ, բարձ  
 զգա » (Գործ. ԻԱ. 36) : Ժողովուրդը  
 շատ անգամ մղած, մերժած և հեռա-  
 ցուցած է այն աննման հոգիները, որոնք  
 անբաւ կապով կապուած են եղեր ժա-  
 ղովրդի հետ, և չէ կամեցեր նուիրա-  
 կան հայրենիքէն մի բուռն հող ան-  
 գամ տալ նոցա՝ թաղուելու համար :

Հայրենասէրները հայրենիքը սիրեր  
 են նոյն իսկ հայրենակցոց համար, և  
 ազգը սիրեր են նոյն իսկ ազգի հա-  
 մար. իսկ իրենց բաժինն եղեր է նը-  
 զովք և ապերախտութիւն, զոր, առ-  
 անց նեղանայու, սիրով խնդրեր և  
 ընդուներ են : Մյս է ահա ոչ միայն  
 ժողովրդասէրներու և ազգասէրներու  
 վարձը, այլ և մարդկային ազգի ամեն  
 նշանաւոր բարերարներու : Սինչև որ  
 նքառ չեն նզովուեր և չեն զոհուեր  
 բանտի մէջ, պատերազմի մէջ, կախա-  
 զանի վրայ, խարուկի վրայ, նոցա սէրը  
 իւր լուծեանը չէ հասեր : Վասն զի  
 նորա այն նուիրական շիշն են, որոնք  
 մինչև չը բեկուին, բովանդակ անու-  
 շահատութիւնը չը ծաւալիր ժողովրդ-  
 դի վրայ, ազգի վրայ և մարդկութեան  
 վրայ : Վարդկութիւնը շատ անգամ  
 արձաններ կը կանգնէ այն անձանց  
 համար, որոնք ժողովուրդը կը մոռ-  
 թեն, և ընդհակառակն՝ կախազան կը  
 պատրաստէ այն անձանց համար, ու  
 ընդ ժողովրդի սիրով կը ստալրին : Շատ

ուշ միայն ժողովուրդը կըզգայ և կ'աբստասուէ իւր խիստական բարեբախներու համար : և այս է ժողովըդասէրներու համար ազգասէրներու անեղծ փառքը և անմահ յայլթանակը : Սակայն, պիտի խոստովանինք որ ապերախառութիւնը ամեն ժամանակ ուղղակի ժողովըզէն չը բղնէր ազգասէրներու դէմ : այլ տեսակ մի անձնագաշտ, չարակամ և վայրենամիտ անձերէ, որոնք երբեմն իբրեւ ժամատխոս կը վարակին ժողովըդէի սիրտը, միտքը եւ իր բարեբախներու դէմ կը գրգռեն : Այս տեսակ անձինքը միութեան բաժանարարներ են : Այսն զի մարդը միացած է ընտանեաց հետ, ազգի հետ և մարդկութեան հետ ք Սիութեան մէջ է ամբութիւնը, զոր գերութեան և ըստիութեան երկաթները կարող չեն խորտակել : միաբանութեան մէջ է նայնպէս փոխադարձ օժանդակութիւնը և կեանքը : Հետեւապէս միացածը բաժանել կը նշանակէ սատանայի գործ գործել՝ իսկ միացածը հարածել, հարստահարել և մահացնել : Ինչ անուն կարէ ունենալ այս սարսափելի գործողութիւնը : Սակայն, զգայուն սրտերը հեծութեամբ կը տեսնեն շատ անպամ, որ եղբայր եղբոր, ազգ ազգի շղթաները դարբնած ունի : կը տեսնեն փոխանակ օգնականութեան՝ որբայիղծ հարստահարութիւն, և փոխանակ Քրիստոսի քաղցր և մարդասէր պատկերին կայէնի ուրուակներ :

Իւրեր այս շարեաց աղբիւրը կը հետազտեն, կը նշմարեն ակներեւ, որ այս ամենը սգիտութենէ եւ անկրթութենէն յառաջացած են և մարդաց զազգաց փոխադարձ պարտուց անկատարութենէն : Այսն զի, ամեն անհաս պարտք ունի իւր արդիւն օգնելու, և իւրաքանչիւր ազգ պարտք ունի մարդկութեան օգնելու :

Որովհետեւ, ինչպէս անհասները ազգութեան սնդամ են, նոյնպէս և իւրաքանչիւր ազգ սնդամ է հանուր մարդկութեան : Ինչպէս ամեն անհաս պարտական է իւր ազգի իրաւունքը և արդարութիւնը պաշտպանել, նոյնպէս ամեն ազգ պարտական է ազգաց իրաւունքը վերականգնել, եթէ յափշտակուած են : Այսն զի, իրաւունք պաշտպանել կը նշանակէ հանուր մարդկութեան բարեբախել : Սկզբիտեսս Սարաթոնի մէջ, էննիդաս թերամսիկէի, թեմիտտիկէս, Սալամիի և Սարդան Շաւարշանի մէջ, հայրենի իրաւանց համար պատերազմերով կը պատերազմէին մարդկային ազգի ու պապայի համար : Այս ազգը, որ սնտարբերութեամբ կը նայի իր դրացի ազգի ճնշմանը և հարստահարութեք վրայ, նս ինքը իր համար փոս կը փորէ ք ուր անպատճառ օր մի պիտի թաղուի իսկ այն ազգը, որ ինքը արդէն իւր օգտի համար անտարբեր է, նս մի փրտած մորմին է մարդկութեան մէջ, որ աւելի լաւ է չորս կողմը պատքաւել, քան թէ թողուլ որ իւր հոտը տարածուի և ուրիշները և սահայնէ : Թէ ինչու մեր նիւթէն հեռանալով այս սողաց համեմատութիւնները յառաջ կը բերենք, անպահով եմք, որ միտող ընթերցողները կը հասկանան մեր նպատակը : Սեր նպատակը ոյնքան տրամաբանել չէ, որքան ջերմացնել վասն զի մեր առարկան Աէրն է, որ ջերմութեամբ զգալի կը լինի, քան թէ տրամաբանութեամբ : Ազգաց պարտուց և վիճակի վրայ խօսելով կամիմք ցոյց տալ հայրենասիրի զգացման ամենավերին կէտը, և պատկերացնել թէ ինչ ծանր վշտակրութեան տակ է նորա փայտուկ սիրտը, երբ սրբային համոզաւաստան չէ իւր հայրենեաց և հայրենակցաց վիճակը :

« Այն հայրենասէր սիրտը, այն ազգասէր թափանցիկ աչքը, որ կը դգայեւ կը տեսնէ թէ իւր ազգը ոչ միայն ընդհանուր մարդկութեան օգնելու կարողութիւն չունի, այլ և իրօքին անդամ անասորքեր է, և ազգաց մէջ խեղամիւր անդամայած մի համարուած է: Այն սիրտը, որ գրկած ունի իւր հայրենիքը, իւր բոլոր ազգը և նորա վելան ու տառապանքը, այն սրտի նման ծանր բան չլիցայ աշխարհիս վրայ: Այն ոչ իշխանական խղճախճանսութեանց մէջ թարխուրութիւն ունի, և ոչ թափառարական հանդիսից ժամանակ բերկրանք: « Բնդէր՝ արուած և տխուր են երեսք քո, և կը հարցնէ Արասէս Պարոնի թագաւորը իւր տակառարեւտ Նեմի խորուշէլըսայն: — « Օ, խնորհ ոչ արտու՛մ և տխուր վիցին երեսք իմ, կը պատու խանէ Նեմի, վասն զի քաղաքն եւ տուն և հօր իմց անասպատէ և դրունքն ազականեալ ՚ի հրոցո: Ի՛նչ է արեմն բողձանքդ, վերասին կը հարցնէ թագաւորն: Նեմիի սիրտը կը բարախի, միտքը կը յուզի, կը դողդողայ սաստիկ այլայլութենէն, և կը ինզրէ իւր հայրենիքը դառնալ, որ թէպէտ աւերուած ու պրուած էր, բայց քաղաք էր իր համար: Ար պաղատէ Նեմի. « Տէր, եթէ եգիտ ծառայ քո շնորհաս առաջի երեսաց քոց և կամիս՝ յըզեա զիս ի շրէսատան, ի քաղաքս յիշատակարանաց հարցն իմցոց, և երբ կը կատարուի ինզիրը, կարծես թէ ծանր արտմութեան ձմեցուցիւ ապառասժ վէմը կը յնդի կուրծքի վայէն իբրեւ ամենաթեթեւ գտրըն: »

Այն հայրենասէրը, որ կը տեսնէ իւր հայրենիքը աւերակ, քաղաքները հիմնայատակ, նուիրտիան տաճարները վրէալ, նախահարց գերեզմանները կոխան օտարաց, և յիշատակարանները

որ ու վառքը եղծուած, միթէ չաղաք գողկէր խորին թախմութեանք, ինչպէ՛ս Նեմիին. « Օ, խնորհ ոչ արտու՛մ և արխուր վիցին երեսք իմ, վասն զի քոս դաքն և տուն և հօր իմց անասպատէ, և դրունքն ազականեալ ՚ի հրոցո: »

Այն սրտացած ազգասէրը, որ լցած և բարոյականութի կը քարոզէ և աւերուածաց երկիր տաղաւորութիւն կ'աղաղակէ, և կը տեսնէ որ իւր ժողովուրդը գարձեալ գերութիւն ու Վշխիտու կը սիրէ և բեռնակրութեան օտխաւարի կը վախալքի, ջանկարով ձի և ջորի վննելչ քան թէ մարդ, այն առաջնապեալ ազգասէրը ի՛նչպէս չը կրկնէր, « Տէր, եթէ թողուս զմեզ ժողովրդ գեան իմց, թող, ապա թէ ոչ ջնջեալիս ՚ի գաղութենէ կենացո: »

Այն ազգասէրը, որ կը տեսնէ իւր եղբարքը և ազգականքը մոլորուած ոչ խարնելու նման ցրուած, անտուն անօգնական, ընտանեկան և հայրենական միթիթարութենէ դրկուած, մախիրը իրենց համար հաց դարձած, և իրենց բնակիւն քրտամբք և արտասուք խառնուած, յերկրէ երկիր թափառական, իրենց անուեր և յիշատակ մոռցած, այն վշտալարարաւ ազգասէրը ինչպէս չուխտէր, « Ախարիք ինզրէի նըզ վննիլ ՚ի Բրիտոստէ վասն ազգականաց իմց և եղբարց: »

Այն ժողովրդասէրը, որ կը տեսնէ թէ իւր ժողովուրդը գտնէ այնչափ չը սիրէր իրաւունքը, արդարութիւնը և ազատութիւնը, որչափ մշակը կը սիրէ հունձը, արուեստաւորը՝ օրական հացը, վաճառականը՝ հարտութիւնը, նաւաստին հանգստութիւնը և զինուորը՝ վառքը, որ գտնէ նիւթա կանի չափ չը մտածէր իւր բարոյական արժանաւորութեան վրայ, այլ տեսակ մի անտանական ու բռնական կենսի կը վարէ, կը հարկանեն չըգգար, կը

չարժեն՝ չը շարժիր, սչք ունի՝ չտուեա նէր, և ականջ ունի չը լսէր, քննչ կու ըող է ուխտուէլ այս ամենը սեռնուղ և զգացող ժողովուրդասէրը, եթէ սչ իւր գոյքը և կեանքը զոհեւ, միայն թէ իւր ժողովուրդը զարթնու, կենդաւ նանայ և իրբեւ մարդ ապրի մարդու թեան մէջ:

Այն ազգասէրը, որ կը տեսնէ իւր ազգային մարմինը տկար և գունաթափ վէրքերը հագած որպէս զգետտ, կենդանարար վայրը աչքերէն շլճած եւ ծռնկները կթուցեալ, միթէ չհարցը նէր. արդեօք այս իմ մարմինն է և պատկերը, արդեօք այս վէրքերը վաթաթող ձեռք չը կայ. արդեօք այս շլճած տեսութեանը ըյտ տուող չը կայ. արդեօք միշտ ծարաւ ժամանա կը լեղի և քայտիս պիտի արբուցանեն: Ա՛յ, եթէ այսպէս է, կուխտեմ նըզ վուխ, կուխտեմ զհաւիլ, և թող ապրի այս տառապետը:

Այն ազգասէրը, որ կը տեսնէ ամէն օր հազարաւոր քրոնիթոր բեռնակիր ներ, որոց կեանքը ստուերի նման կ'անցնի, կը տեսնէ հարիւրաւոր ընտանիքներ, որոնք տառապանայ մէջ կը հեծեն և կը մաշին. կը տեսնէ հազարաւոր մանուկներ, անպատասպարան անուամուկներ, որոնք թշուառութե մէջ կ'աճին, թշուառութեան մէջ կը թաւամին, ծառայ կը ծնանին, ծառայ կը մեռանին. երբ իւր միլիոնաւոր ազգակցաց այս տխուր պատկերը կը տեսնէ և կը զննէ, քննչպէս կարէ չը մղիտալ և չըղաղակել. «Ա՛յ ազգաբէն մարմինք եղբարց մերոց մարմինք մեր են, և որդիք նոցա՛ որդիք մեր. և արդընդէր տուաք զորդիս մեր ՚ի ծառայութիւն, և դատերք մեր վարեալ են ՚ի բռնութիւն»: (Նէիֆ Ե, 5):

Այն հայրենասէրը, երբ կը տեսնէ մանուաւանդ, որ թէ գոտարներէն,

և և թէ՛ իր ազգակիցն. բու մէջ կան մարդիկ՝, որոնք ժողովուրդի տառապանայ ժամանակ հանգիստ են, որոնք ժողովուրդի սղալու ժամանակ իւրենք կը ծիծաղին, որոնք վտխանակ ժողովուրդը տառապանայ ազմէն հանելու՝ աւելի կը խորատուզեն, որոնք ազգի վերաւոր դիակները կը դիպեն, և այն բարձրութեան վրայ իրենց աթոռը կը գնին, այն հայրենասէրը, որ կը գիտէ թէ այն օրինակ որդունք կան, որոնք ազգային վերաւոր մարմինը կը կրծեն և արիւնը կը ծծեն, որոց աչքը արատաւք չունի և սիրող պողովատ է, որոնք իրենց անձին կը զոհեն հազարաւոր եղբայրներ. ճշմարիտ կ'ասեմ, որ այս ազգասպանութեան ահաւել տեսարանը նկատող ազգասէրը կենդանի զոհ մի է, որ հանապաղ կը տու չորի և կը ձենձերի պրտով մտածուութեամբ և անպատու մթաթութեամբ:

Այսպէս ահա, երբ քիտոր, արտատաքը, մերկութիւնը, ստրկութեանը և տգիտութիւնը բաժին են հայրենակցաց, հայրենասիրի բաժինն է նոյովք, նորա ուխտան է նոյովք, անձին իւր եղբարց իրաւանց, բարբորութեան և կենդանութեան համար: Այս է ազգասէրներու ուխտը, և այսպէս՝ ազգի սէրը կը վառէ և կը սպառէ նոցա կեանքը, ինչպէս այն նուիրական հուրը, որ ի հնուամի կ'այրէք զհը և ողջակէզը: Այս ուխտն էր մեր բընաբանը, այս թող լինի և մեր նշանութանը. «Ուխտուք խնդրէի ես իսկ ինքնին նոյով լինիլ ՚ի Քրիստոսէ վտան եղբարց իմոց և ազգականայ ըստ մարմնոց»:

Գ. Մարապետանց  
*(Handwritten signature)*